ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/40

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Բողոքաբեր՝ «Մեդիսար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մարգարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, «Օքսիէթիլիդենտի ֆոսֆոնային թթվի» ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեդիսար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից 13.03.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «Օքսիէթիլիդնետի ֆոսֆոնային թթվի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը մեյժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում,
- «Մեդիսար» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում: Եթե բողոք քննող անձը գտնի, որ ընտրված մասնակից ճանաչելու մասին պահանջը հնարավոր չէ բավարարել, ապա պարտավորեցնել «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 41-րդ կետի համաձայն «Մեդիսար» ՍՊԸ-ին հնարավորություն տալ սահմանված կարգով շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 13.03.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/40 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

24.03.2020թ.-ին և 13.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.04.2020թ.-ին:

2. <u>«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մեդիսար» ՍՊԸ-ն 13.03.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի մարտի 6-ին հրապարակված թիվ 2 արձանագրության համաձայն <Մեդիսար> ՍՊԸ-ի (այսուհետև նաև Ընկերություն) ներկայացված հայտը գնահատվել է

անբավարար և մերժվել է: Գնահատման հանձնաժողովի Ընկերությանը վերաբերելի մասով վերոհիշյալ բովանդակությամբ որոշում կայացնելու հիմք է հանդիսացել Ընկերության կողմից ներկայացված հայտում թիվ 3 Հավելվածի ներբեռնված չլինելու հանգամանքը, այն դեպքում, երբ հայտի ներբեռնման համակարգում բացակայել է թիվ 3 Հավելվածի համապատասխան պատուհանը: Նշված արձանագրությամբ «ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս հետ պայմանագիր կնքելու հայտարարությունը է հրապարակվել սույն թվականի մարտի 6-ին: Ընկերությունը չի ընդունում հանձնաժողովի որոշումը դրա ոչ իրավաչափ լինելու հիմքով և ղեկավարվելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի (այսուհետև նաև Օրենք) 46-րդ, 47-րդ և 50-րդ հոդվածների պահանջներով, ներկայացնում ենք սույն բողոքը.

1. Պատվիրատուն՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարել է բաց մրցույթ, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

2. Մրցույթին մասնակցելու հայտեր են ներկայացրել «Մեդիսար» ՍՊԸ և «ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ:

3. Մրցույթում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 22425000.00 ՀՀ դրամ:

4. 28.02.2020թ.-ի հայտերի բացման և գնահատման նիստի ժամանակ նիստը որոշվել է համաձայն 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջներով 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը «ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, որը կայացել է թիվ 1.1 Հավելվածը չներբեռնելու հանգամանքով:

5. 05.03.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետում ամրագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտը անբավարար է, քանզի ներբեռնված չէ թիվ 3 Հավելվածը, այն դեպքում, երբ հայտի ներբեռնման ժամանակ առկա աղյուսակներում բացակայել է թիվ 3 Հավելվածի ներբեռնման համապատասխան պատուհանը և/կամ աղյուսակը:

6. Տվյալ ծածկագրով ներկայացված գնման հրավերից անհնար է եզրակացնել, որ հայտի ապահովման թիվ 3 Հավելվածը պարտադիր է, քանզի armeps.am հարթակում հայտը ներկայացնելու ժամանակ առկա չի եղել թիվ 3 Հավելվածը ներբեռնելու որևէ պատուհան:

7. Եթե ենթադրենք, որ թիվ 3 Հավելվածը ենթակա էր ներբեռնման, ապա Գնահատման հանձնաժողովը պետք է տրամադրեր Ընկերությանը ժամանակ շտկելու հայտում առկա անհամապատասխանությունները հայտ ներկայացրած մյուս մասնակցին նման հնարավորություն ընձեռնելու նպատակով 28.02.2020թ.-ի նիստը կասեցնելու ժամանակ:

8. Գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության կողմից ներկայացված հայտը անհիմն մերժվել է և չի ապահովվել գնման գործընթացի մասնակցության հավասար իրավունքը, քանզի շտկման հնարավորություն տրամադրվել է «ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ-ին, այն դեպքում, երբ համապատասխան աղյուսակը թիվ 1.1. հավելվածի ներբեռնման համար առկա է եղել համակարգում, իսկ թիվ 3 Հավելվածի ներբեռնման համապատասխան պատուհանը և/կամ աղյուսակը լիովին բացակայել է, որը համակարգային խոտանի և/կամ այլ տեխնիկական բացթողման արդյունք է, և որևէ կերպ Ընկերության սխալի արդյունք չի:

9. Ընկերոյթան կողմից ներկայացվել է հրավերին համապատասխան հայտ համապատասխան փաստաթղթերի ամրագրմամբ, որոնց ներբեռնման հնարավորությունը տրված էր armeps.am համակարգում:

Գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտի մերժումն ակնհայտ անհիմն է, որը <Գնումների մասին> ՀՀ օրենքի (այսուհետև նաև Օրենք) համապատասխան դրույթների սխալ մեկնաբանության, չկիրառման և խախտման արդյունք է, մասնավորապես.

<Գնումների մասին> ՀՀ օրենքի (այսուհետև նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետև նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետում ամրագրված է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ավելին, նույն Կարգի 41-րդ կետում սահմանված է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությ ունները

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ Ընկերության հայտը անհիմն է մերժվել: Ավելին, համապատասխան հարթակում առկա չի եղել որևէ տեխնիկական հնարավորություն և/կամ պատուհան թիվ 3 Հավելվածի ներբեռնման համար: Եթե այդպիսի ապահովում ենթադրենք պարտադիր էր սույն գնման հրավերի համար, ապա ոչ միայն պետք է ապահովվեր վերջինիս ներբեռնման համար համապատասխան աղյուսակը և/կամ պատուհանը, այլ նաև այդպիսի ներբեռնման բացակայության դեպքում մասնակիցների կողմից չներբեռնելու դեպքում տրվեր հնարավորություն թիվ 3 Հավելվածի ներբեռնման, համակարգի խոտանի հետևանքով առաջացած անհամապատասխանությունը շտկելու Կարգով սահմանված հնարավորությունը:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Մեդիսար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «Օքսիէթիլիդնետի ֆոսֆոնային թթվի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում,
- «Մեդիսար» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում: Եթե բողոք քննող անձը գտնի, որ ընտրված մասնակից ճանաչելու մասին պահանջը հնարավոր չէ բավարարել, ապա պարտավորեցնել «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 41-րդ կետի համաձայն «Մեդիսար» ՍՊԸ-ին հնարավորություն տալ սահմանված կարգով շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 13.03.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել երկու մասնակիցներ՝ «ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ-ն և «Մեդիսար» ՍՊԸ-ն, ներկայացնելով համապատասխանաբար 19 845 000 ՀՀ դրամ և 22 425 000 ՀՀ դրամ գնային առաջարկներ:

Հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ գնման հրավերով սահմանված փաստաթղթերից «ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ-ի կողմից չի

ներբեռնվել իր կողմից հաստատված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված N 1.1-ը, իսկ «Մեդիսար» ՍՊԸ- ի կողմից՝ հայտի ապահովումը:

«Մեդիսար» ՍՊԸ-ի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի 6-րդ կետում նշված է՝ «Տվյալ ծածկագրով ներկայացված գնման հրավերից անհնար է եզրակացնել, որ հայտի ապահովման թիվ 3 Հավելվածը պարտադիր է»,

չի համապատասխանում իրականությանը, քանզի գնման ընթացակարգի հրավերում՝

** «ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ» 1-ին մասի 7-րդ կետով սահմանված է «Հայտի ապահովումը»,*

** «ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ» բաժնի 4.3 կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝*

4) հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (Ականավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,

4) 7-րդ գլխում՝ «ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ», նշված է՝

7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման,

2-րդ մասում՝ «Բաց մրցույթի հայտը պատրաստելու հրահանգ», սահմանված է՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.5 հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը

ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտապատված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,

Ինչպես նաև առկա է հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու դեպքում համապատասխան ձևաթուղթը՝ հավելված N 3:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չի հերքում, որ հայտը ներբեռնելու ժամանակ armeps.am հարթակում չի եղել առանձնացված պատուհան թիվ 3 հավելվածը ներբեռնելու համար:

Սակայն հրավերում ի սկզբանե Մասնակցին առաջարկվում է՝ նախքան հայտ կազմելը և ներկայացնելը մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման, իսկ հրավերով սահմանված է «Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում»:

1) ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին մասի «ե» ենթակետի համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ե. հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտապատված (Ականավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

2) Նույն որոշման 42-րդ կետի համաձայն՝

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հարկ է նշել, որ հայտերի բացման նիստի տեղի է ունեցել 28.02.2020թ., որը կասեցվել և վերսկսվել է 05.03.2020թ., սակայն «Մեդիսար» ՍՊԸ-ն, ինչպես ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին մասի «ե» ենթակետով սահմանված ժամկետում, այնպես էլ դրանից հետո, մինչև նիստի արձանագրությունը հրապարակելը չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը:

Ելնելով վերոգրյալից պարզվում է, մասնակիցը հավանաբար մանրամասն չի ուսումնասիրել գնման ընթացակարգի հրավերը և չի առաջնորդվել հրավերով սահմանված հայտը պատրաստելու և ներկայացնելու կարգի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին մասի «ե» ենթակետի պահանջներով սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքի այն մասը, որ գնահատող հանձնաժողովը չի ապահովել գնման ընթացակարգի հավասար իրավունք, անհիմն է, քանի որ հայտերի բացման նիստում արդեն պարզվել էր, որ

1. մասնակիցների գնային առաջարկներում առկա է շուրջ 2580000 ՀՀ դրամի տարբերություն:

2. «ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ-ի կողմից հաստատված՝ հավելված N 1.1-ի (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը) փոխարեն (հավանաբար մեխանիկորեն) կրկնակի անգամ ներբեռնված էր հավելված N 1-ը (ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն):

3. Համաձայն բաց մրցույթի մասին հայտարարության՝ ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

4. «Մեդիսար» ՍՊԸ-ն ընտրված մասնակից չէր կարող ճանաչվել, քանի որ ընթացակարգի մյուս մասնակից՝ «ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է շուրջ 2580000 (երկու միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ ցածր գնային առաջարկ, ինչպես նաև հայտի ոչ գնային պայմանները գնահատվել է «բավարար»:

Հիմք ընդունելով վերը նշված մեկնաբանությունները «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը գտնում է, որ բողոքի պահանջը

անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, քանի որ հանձնաժողովը չի խախտել մասնակիցների մասնակցության հավասար իրավունքը և գնման ընթացակարգում մասնակիցների համար ապահովել է հավասար իրավունքներ, քանի որ ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «Օքսիէթիլիդենտի ֆոսֆոնային թթվի» ձեռքբերման նպատակով 13.02.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Մեդիսար» ՍՊԸ-ն և «Թագ հեմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներբեռնված չէ հայտի ապահովումը համաձայն (հավելված N 3)-ի:

Նույն արձանագրության համաձայն՝ «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, իսկ «Թագ հեմ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մեդիսար» ՍՊԸ-ի

կողմից 13.03.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ն, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնման ընթացակարգին

մասնակցության հայտ ներկայացնելիս, գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել հայտի ապահովումը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի՝ ընդ որում որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից:

Անդրադառնալով «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված մյուս՝ ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու մասին ներկայացված պահանջին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն ենթակա է մերժման, քանի որ Հանձնաժողովի կողմից նախ պետք է կայացվի արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ որոշում, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի դրույթները, որից հետո նոր միայն հնարավոր կլինի գնահատել մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթեր համապատասխանություն հրավերի պահանջներին՝ պահպանելով Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 40-րդ կետի դրույթները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացնելով «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին անբավարար գնահատելու մասին որոշում՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Կարգի 41-րդ կետի դրույթներով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 13.03.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/40 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-10/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 28.02.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

- ընդունելու «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին որոշում:

Բողոքը՝ «Մեդիսար» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասով՝ մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**